էին հայ գաղթականները: Նա պէտք է անցկենար Էրզրումից: Այստեղ, մի օր, փողոցից անցկենալու ժամանակ, յանկարծ մի թուրք յարձակւում է նրա վրայ, եւ իր դաշոյնի մի հարուածով կտրում է նրա պարանոցը, եւ գլուխը մի կողմ գլորելով, ուրախութեամբ գոչում է. — «ես տարա՛յ... ես տարա՛յ...»: Թուրքերի բազմութիւնը հաւաքւում է նրա շուրջը, հետաքրքրութեամբ հարցնում են, թէ ինչը՞ տարաւ. — «ընկերիս հետ վիճում էինք, — պատասխանում է եղեռնագործը, — նա ասում էր, թէ իմ դաշոյնը աւելի սուր է. իսկ ես ասում էի, թէ իմն է աւելի սուր: Վճռեցինք փորձել այդ գաւուրի պարանոցի վրայ, գրազ գալով, թէ մեզանից ով որ մի հարուածով կը կտրէ պարանոցը, միւսը պէտք է պարտաւորի իր հաշոով հիւրասիրել նրան մի ֆինջան քաղցր ղահուէով եւ մի նարգիլէով: Այժմ ես տարա»: Բազմութիւնը գովաբանում է սրիկայի քաջութիւնը, ասելով՝ «մաշալլա... մաշալլա...» եւ հեռանում է: Իսկ սրիկան, իր ընկերի ձեռքից բռնելով, քարշ է տալիս դէպի ղահուէտուն, որ ստանայ խոստացած մրցանակը: Մի ամբողջ օր հօրս դիակը մնում է հրապարակի վրայ: Մուսուլմանները ծաղրելով են անցնում նրա մօտից, թէ որքա՜ն թոյլ է եղել «գաւուրի» պարանոցը, որ մի հարուածից կտրոել է. իսկ ոմանք զարմանում էին սրիկայի բազկի զօրութեան եւ նրա դաշոյնի սրութեան վրայ: Բայց տեղային հայերը, երկիւղից չէին համարձակոել ցերեկով մօտենալ նրան, եւ միայն գիշերով վեր էին առել դիակը ու թաղել:

Այդ սարսափելի եղեռնագործութեան լուրը խիստ սառնասրտութեամբ ընդունոեցաւ մեր կողմերում, որպէս թէ, սովորական անցքերի կարգից դուրս մի բան չլինէր: Մեր թշնամիները ուրախացան, իսկ մեր բարեկամները աւելորդ համարեցին տրտմել: Աւելի հասկացող մարդիկ այսպէս էին բացատրում, թէ աստուած նրա ճակատին այնպէս էր գրած, պէտք է այս տեսակ մահով վախճանոէր: Իսկ իմ քեռիները ասում էին, թէ աստուած պատժեց նրան, որովհետեւ նա գողացել էր նրանց քրոջը հօր տանից, եւ մի այսպիսի մարդ չէր կարող բախտաւոր լինել: Մի սիրող սիրտ միայն խորին կերպով խոցուած էր, — դա իմ մօր սիրտն էր: Այդ ողորմելին մինչեւ մահ չկարողացաւ մոռանալ թշուառ ամուսնի կսկիծը: Ես եւ իմ քոյրերս ոչինչ չէինք հասկանում. մենք միայն անգիտակցաբար լաց էինք լինում, երբ տեսնում էինք, որ մեր մայրը լաց էր լինում: Բայց երբ ես մեծացայ, այն ժամանակ միայն հասկացայ բոլորը, եւ դառն վրէժխնդրութիւնը, իմ հասակի հետ, սկսեց փոքր առ փոքր աճել...

Դրանից աւելի այլեւս ի՞նչ կարող էր լինել, որ ազդէր որդու սրտի վրայ, որ զուրկ չէր զգացմունքից, որ սկսել էր հասկանալ, թէ ի՞նչ բան է բարբարոսութիւնը: Իմ հօր պարանոցի վրայ կատարոել էր մի սոսկալի փորձ, որը եթէ